ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30Ա

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ-9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի 2019թվականի թիվ-9 նիստի օրակարգը

1. Համայնքի ավագանու 29.նոյեմբերի 2019թվականի թիվ-29Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2. Արևշատ համայքում 2020թվականի ,, Տեղական տուրքերի և վճարներ,, սահմանելու մասին

3. Համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակիցների, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և ավագանու 28.12.2018թվականի թիվ-55Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

4. Արևշատ համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգման մասին.

5. Համայնքապետարանի աշխատակազմին համայնքային ծառայության համար սահմանվող հավելաճարների կիրառման կարգ և չափը

հաստատելու մասին.

6. Արևշատ համայնքի սեփականություն համարվող մի շարք հողեր աճուրդային եղանակով օտարելու. մեկնարկային գին և լոտի չափ սահմանելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈՒ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.ՆՈՅԵՄԲԵՐԻ ԹԻՎ-29Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով .. Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Արևշատ համայնքի ավագանու Մանկապարտեզի աշխատանքները ժամանակավոր դադարեցնելու մասին 29.11.2019թվականի թիվ-29Ա որոշման հղումը ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածը կարդալ Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության 13-րդ և 10-րդ հոդվածներ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-դ կետով , Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

Համայնքի ավագնին որոշում է՝

1. Սահմանել Արարատի մարզի Արևշատ համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը համաձայն հավելված1-ի

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1
Արևշատ համայնքի ավագանու
20-ը դեկտեմբերի 2019թ.
թիվ 32-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզիԱրևշատ համայնքում սահմանվում են 2020թ. տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ - 7.500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2.500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով՝ սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2.500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, կեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6600 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6600 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝11000 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7600 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 1500 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.500դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա 8000դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրան գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝600 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10). Հայաստանի Հանրապետության Արևշատ համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

11). համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3.000 դրամ:

2.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնքի 2020 թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականոցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ.

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 7500 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1500 դրամ.

6) Արևշատի մանկապարտեզիծառայություններից օգտվողների համար համայնքի պատվերով

մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել ամիսը 6000 հազար դրամ :

7.Արևշատի երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել 7000հազար դրամ

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար.
9) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ.

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.000 դրամ, կամ
բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 4 000 դրամ, իսկ համայնքում
10).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝
ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 25 դրամ /1քառ.մ./.
բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ /1քառ.մ/.
գ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 3 դրամ /1քառ.մ./.
11). համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները՝
1. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ.
2. ծննդօգնություն՝
2.1. թեթև միջամտություն -1.000 դրամ.
2.2. ծանր միջամտություն -5.000 դրամ.
3.արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի-100դրամ, խոշոր կենդանի - 200դրամ, բացառությամբ <<Գյողատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.
4.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200դրամ.
5.ախտահանություն -1 քմ 200 դրամ.
6.միջատազերծում(դեզինսեկցիա) - 1 քմ 100 դրամ.
7.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) -1 քմ 200 դրամ.
8.արհեստական սերմնավորում -5.000 դրամ.
9.կենդանու հերձում՝ մանր կենդանի -1.000դրամ;
խոշոր կենդանի -3.000դրամ.
10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի -1.000 դրամ,
խոշոր կենդանի -2.000դրամ.
11. կենդանիներին ախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝
մանր կենդանի-1.000 դրամ,
խոշոր կենդանի-2.000դրամ.
12.կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2020թ.հուլիս ամիսը)՝
մանր կենդանի -1.000 դրամ,
խոշոր կենդանի -2.000դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ55Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-որ կետերքվ և

,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ն կետի 1-ին ենթակետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձը. համայնքապետարանի աշխատակիցների և բյուջետային հիմնարկների աշատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1.2.3 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Արևշատ համայնքի ավագանու 28.12.2019թվականի թիվ-55ն որոշումը

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1.

Արևշատ համայնքի ավագանու

2019թ դեկտեմբերի 20 ի թիվ-33Ն որոշման

2020ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12 /2020/

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2019Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/
1.Համայնքի ղեկավար		300000
	Հայեցողական պաշտոններ	
2.Համայնքի ղեկավարի տեղակալ	1.0	160000
3.Համայնքի ղեկավարի օգնական	1.0	90000
	Ծառայության պաշտոններ	
Համայնքային		
4.Համայնքպետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1.0	210000
5. Համայնքպետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1.0	190000
6.Համայնքպետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	թափուր	100000
7.Համայնքպետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1.0	100000
	Քաղաքացիական աշխատանք	
8.Գրադարանավար.և մշակույթի տան տնօրեն	1.0	90000
	Տեխսպասարկման անձնակազմ	
9.Պահակ/այգեպան	1.0	100000
10.Հավաքարար	1.0	95000
11.Կատարացու/ վարորդ	1.0	90000
12.Գործավար	0.5	50000
13 Աղբատարի վարորդ	1.0	90000

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

Հավելված 2.

Արևշատ համայնքի ավագանու

2019թվականի դեկտեմբերի 20-ի թիվ-33-Ն որոշման.

2020Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ 13

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
Տնօրեն	1.0	180000
Դաստիարակ	0.56	73000
Դաստիարակ	0.56	78000
Դաստիարակ	0.56	78000
Դաստիարակ	0.56	78000
Երաժ. դաստիարակ	0.5	73000
Դաստիարակի օգնական	1.0	90000
Դաստիարակի օգնական	1.0	93000
Խոհարար,	1.0	90000
Տնտեսվար /օժանդակ բանվոր/	1.0	93000
Պահակ	1.0	90000
Հաշվապահ	0.5	75000

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

Հավելված 3

Արևշատ համայնքի ավագանու

2019վականի դեկտեմբերի 20-ի թիվ-34-Ն որոշման.

2020Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ 14		
Երժշտական դպրոցի տնօրեն տնօրեն մասնագիտական	1.0 0.4	90000 36000
Ուսմասվար մասնագիտական քանոն	0.5 0.7	45000 63000
Դաշնամուր	1.5	135000
Դաշնամուր	1.5	139500
Շվի- դուդուկ	1.3	120900
Դաշնամուր	1.5	139500
Տեսություն /սոլֆեջո/	1.5	135000
Շվի	0.7	65100
Վոկալ	1.4	126000
Քամանչա	1.0	90000
Դհոլ	1.5	135000
Ջութակ	0.9	93000
Հաշվապահ	1.0	90000
Հավաքարար	0.8	73000

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34Ա

ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼՎՃԱՐ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,, Համայնքային ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի բ կետի և ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդկետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքային ծառայության բնագավառում համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար ներքոհիշյալ համայնքային ծառայողների դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար՝

Աշխատակազմի քարտուղարի՝ 15 և ավելի տաիների աշխատանքային ստաժի համար դրույքաչափի 10 տոկոսի չափով:

Աշխատակազմի գլխ մասնագետի՝15 և ավելի տարիներիաշխատանքային ստաժի համար դրույքաչափի - 10 տոկոսի չափով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈՒ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Զարգացման նամկի միջև կնքված Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի համաձայնագրի պահանջով՝ վերականգնվող ոռոգման ներտնտեսային ցանցերի սեփականատեր համայնքի կողմից 10 % համաֆինասավորման մասին

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում. ներտնտեսային ոռոգման վերականգնման ծրագրով նախատեսված է Արևշատ համայնքի ներտնտեսային ցանցի վերականգնու 1300մ. երկարությանբ ջրագիծ՝ որի գումարը կազմում է 3812000 / երեք միլյոն ութհարյուր տասներկու հազար դրամ/:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի առավել քայքայված հատվածների վերականգնումը խիստ անհրաժեշտ է և կարևոր, ուստի Արևշատ համայնքի ավագնին տալիս է իր համաձայնությունը Արևշատ համայնքի ներտնտեսային ցանցի վերականգնման համար համայնքային բյուջեից հատկացնել վերը նշված գումարի 10% չափ գումարը

2. Լիազորել համայնքի ղեկավարին ըստ օրենքով նախատեսված կարգի կնքել համապատասխան համաֆինանսավորման պայմանագիր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈՒ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36Ն

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ԵՎ ԼՈՏԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավրման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի հանրապետության Հողային Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետով

Համայնքի ավագանին որոշում `

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդի կարգով օտարելու

1. 03-021-0036-0010ծածկագրի տակ գտնվող 0.11676հա բնակավայրերի այլ հողեր
2. 03-021--0036-0012 ծածկագրի տակ գտնվող 0.09943հա բնակավայրերի այլ հողեր
3. 03-021-0036- ծածկագրի տակ գտնվող 0.17413հա բնակավայրերի այլ հողեր
4. 03-201-0115-0003 ծածկագրի տակ գտնվող 0.038 հա գյուղատնտեսական այլ հողեր
5. 03-021-0176-0013 ծածկագրի տակ գտնվող 0.20402 հա գյուղատնտեսակն նշանակության /վարելահող/

2. Օտարվող հողամասերը չունեն սահմանափակումներ.

օտարվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

3. Օտարվող հողամասերի լոտի չափը սահմանել՝

գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի նվազագույն չափը 100քմ և ավելի.

Բնակավայրերի այլ հողերի նվազագույն չափը սահմանել 100քմ-ից մինչև 2000քմ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՈԳՈՒ ՆԻԿՈԼՅԱՆ**